Հայտարարություն Հեռարձակման օրենսդրության բարեփոխման գործընթացի կապակցությամբ

Հունիսի 15, 2011

Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) կողմից 2010 թվականին ձեւավորվեց Հայաստանում անալոգայինից թվային հեռարձակման անցնելու գործընթացը կարգավորող օրենսդրական բարեփոխումների հարցով աշխատանքային խումբ (ԱԽ): Խմբի նպատակն էր՝ վերամշակել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը՝ հաշվի առնելով բազմաթիվ քննադատական գնահատականները: Աշխատանքային խումբը 2011 թվականի փետրվարին հիմք ընդունեց օրենքի նախագծի մեր՝ մի քանի հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված տարբերակը՝ այն կատարելագործելու միտումով:

2011թ. մայիսի 31-ին ԱԽ անդամների հարակից դիտողություն-առաջարկներով, ինչպես նաեւ նախնական տարբերակի վերաբերյալ միջազգային փորձագետների եզրակացություններով, նախագիծը ներկայացվեց ՀՀ Ազգային ժողով: Դա նաեւ նշանակում է ոլորտի հրատապ խնդիրների լուծման նպատակով ձեւավորված աշխատանքային խմբի գործունեության դադարեցում:

Մենք՝ խմբի անդամ ԶԼՄ ոլորտի հասարակական կազմակերպությունները, մեր մտահոգությունն ենք հայտնել օրինագծի ներկա խմբագրության վերաբերյալ, այն առայժմ համարելով անկատար, իսկ աշխատանքների ավարտը՝ վաղաժամ: Նախագծում կան խորը քննարկման ենթակա մի շարք կարեւոր հարցեր, որոնք անհրաժեշտ վերլուծության չեն ենթարկվել: Ամբողջովին ու մանրամասնորեն հաշվի չեն առնվել մասնագետների առաջարկությունները, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի եւ ԵԱՀԿ ի փորձագետների դիտողությունները:

Այս իրավիճակը կասկածի տակ է դնում աշխատանքների սկզբնական եւ առանցքային նպատակը՝ նպաստել, որ ՀՀ Ազգային ժողովը որակյալ օրենք ընդունի:

Հայտնում ենք, որ մենք՝ որպես Նախագծի սկզբնական տարբերակի համահեղինակներ, շարունակում ենք օրենքի լրամշակման աշխատանքները, նպատակ ունենալով այն հետագայում առանձին փաթեթով ներկայացնել ՀՀ Ազգային ժողով: Հաշվի առնելով այս հանգամանքը, խնդրում ենք ԱԺ մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերով հանձնաժողովին՝ հետաձգել նախագծի հնարավոր քննարկումները:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ձևավորված աշխատանքային խմբի անդամներ՝

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երեւանի մամուլի ակումբ
Արզուման ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Առուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» Հ